ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

№ 0731-2022 «09» 12 2022 թ.

«ԷԼԱՐ-ԳՈԼԴ» ՍՊԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան,

Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Էլար-Գոլդ» ՍՊԸ-ի միջև 18.02.2022թ. կնքված «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» N ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-10/21-5 պայմանագրի՝ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից միակողմանի լուծման վերաբերյալ որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով
տնօրեն՝ **Դ. Ղուլյան**

Կատարող՝ իրավախորհրդատու Է. Խաչատրյան, հեռ. (010) 30-00-11

0023, ք. Երևան, Արշակունյաց պող. 23,
հեռ.՝ (010) 44 11 36, ֆաքս՝ (010) 58 15 74,
թեժ գիծ՝ (010) 30 00 11,
էլ. կայք՝ justexpert.am, էլ. փոստ՝ info@justexpert.am

ՈՐՈՇՈՒՄ N

ՀՀ փորձագիտական կենտրոն պետական ոչ առևտրային կազմակերպության և «Էլար Գոլդ» ՍՊԸ-ի միջև 18.02.2022թ-ին կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

08.12.2022թ.

«ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի միջև 18.02.2022 թվականին կնքվել է թիվ N «ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-10/21-5» պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ *«ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ն այսուհետ՝ «Վաճառող» պարտավորվում է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել պայմանգրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:* Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ *գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:* Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն՝ *վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:*

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավակարգավորումները և հաշվի առնելով այն, որ Վաճառողը՝ Պայմանագրի N1 հավելվածով սահմանված ժամանակացույցով և կարգով չի մատուցել Golz KB 200 ասֆալտբետոնե ծածկույթի նմուշանջատիչ ապրանքը՝ ընդհանուր 2,950,000 ՀՀ դրամ արժեքով,

ՈՐՈՇԵՑԻ՝

Միակողմանի լուծել «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի միջև 18.02.2022 թվականին կնքված թիվ N «ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-10/21-5» պայմանագիրը,

«ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ից մատակարարման ժամկետի խախտման համար գանձել Պայմանագրի 6.2 կետով սահմանված տույժ՝ հաշվարկելով յուրաքանչյուր ուշացած աշխատանքային օրվա համար մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0.05 տոկոսի չափով:

Տնօրեն **Դ. Ղուլյան**

Տնօրենություն, հանձնաժողով 5Կ օրվա ընթացքում,
ուսումնասիրության համար,
Տնտեսվարող հասցեագրված 09.12.22